ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Դասի արդյունավետության խթանումը ուրվագծային քարտեզներով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Անդրանիկ Մելիքյան

ԴՊՐՈՑ՝ Փամբակ -Դարանակի միջն. դպրոց

2022թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն_____4

Գրական ակնարկ_____7

Փորձարարական հետազոտություն_____11

Խմբի նկարագիր_____12

Հետազոտության ընթացք_____12

Փորձարարական դաս 1_____14

Փորձարարական դաս 2_____15

Տվյալների մշակում և վերլուծություն_____16

Եզրակացություն_____17

Օգրագործված գրականության ցանկ_____18

Հավելված

Հայտորոշիչ թեստ

Դասապլան 1

Դասապլան 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր դպրոցի առջև ծառացած խնդիրները շատ են ու բազմազան՝ կրթության արդի նպատակներով, աճող սերդի մեջ կատարվող փոփոխություններով, գիտության և տեխնիկայի նվաճումներով և այլն: Ես ուսուցչի ամենակարևոր հատկանիշներից եմ համարում աշակերտների մեջ խանդավառություն առաջացնելու և նրանց լավագույն հատկությունները զարգացնելու կարողությունը՝ նրանց արժանիքները ընդունելու և խրախուսելու միջոցով:

Ներկայումս ուսուցիչը պետք է որդեգրի կառուցողական մոտեցում և օգտագործի ժամանակակից մեթոդներ, առաջնորդվի նորարական գաղափարներով, որպեսզի ուսումնական գործունեության նկատմամբ ձևավորի աշակերտի հետաքրքրությունը: Աշակերտների մոտ պետք է ձևավորվի այն միտքը, որ անհնարին ոչինչ չկա: Այս կոնտեքստում կիսում եմ Մարկ Ֆիշերի խոսքերը.
«Մտքերն ու գաղափարները, որոնք խորը համոզմունք են պարունակում և կրակի մեջ ամրացել են՝ անընդհատ կրկնվելով, առավել արագ կստանան իրենց ձևը»: Ինչպես նշում է վերջինս. «Ամրապնդե՛ք Ձեր միտքը, և հանգամանքները հետ կկանգնեն Ձեր ձգտման առջև»:

Աշխարհագրությունը որպես ճանաչողական, հաղորդակցման լեզու, բազմապիսի հնարավորություններ է բացում աշակերտի առաջ՝ կապակցելով շրջակա միջավայրի, առօրյա իրադարձությունների հետ:

Դասարանում, որտեղ ես դասավանդում եմ, բնականաբար կան ուսումնառության տարբեր մակարդակների վրա գտնվող սովորողներ: Իմ նպատակն է աշակերտների ուսումնառության արդյունավետությունը բարձրացնել քարտեզների և ուրվագծային քարտեզների միջոցով:

Քարտեզները աշխարհագրության երկրորդ լեզուն են, դրանք իսկապես որ աշխարհագրության ալֆան և օմեգան են (Բարանսկի): Քարտեզն աշխարհագրության համար այն դերն է կատարում, ինչ աղը ճաշի համար:

Եվ որպեսզի աշակերտները ներգրավվեն դասապրոցեսին, հարկավոր է՝ աշակերտը հավատա իր ուժերին, սեփական ներուժը լիարժեք իրացնելու հնարավորություն ունենա:

Ինչպես Թոմաս Էդիսոնն է նշում՝ «Մենք հաճախ բաց ենք թողնում մեզ ընձեռած հնարավորությունները, քանի որ դրանք թաքնված են աշխատանքի արտահագուստի տակ»:

Ուսումնասիրելով և համակարծիք լինելով մի շարք հեղինակների մոտեցումներին այս թեմայի շուրջ, անհրաժեշտ է ընդգծել հետևյալը.

- ✓ Քարտեզները կարգավորում, համակարգում ու հեշտացնում են դասավանդվող նյութի յուրացումը:
- ✓ Բազմաթիվ աշխարհագրական հասկացություններ դառնում են մատչելի:
- ✓ Նպաստում են աշակերտների մոտ տարածքային պատկերացումների ձևավորմանը:
- ✓ Քարտեզն ունի ընդհանրացնող մեծ հնարավորություններ:
- ✓ Օբյեկտների և երևույթների միջև փոխկապակցության և փոխազդեցության հետևանքների ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի պատկերացում են տալիս:
- ✓ Քարտեզը նաև չափանիշ է օբյեկտիվ իրականության ճանաչողության հասկացման գործում:
- ✓ Քարտեզը մարդկային մտքի ամենապայծառ գյուտերից մեկն է:
- ✓ Քարտեզը դպրոցում համարվում է յուրօրինակ պատուհան դեպի աշխարհի իմացությունը:
- ✓ Դպրոցական քարտեզները պետք է լինեն պարզ, դիտողական, արտահայտիչ, գրավիչ, դյուրընթեռնելի:

Այսպիսով, մեր ուսումնասիրության նպատակն է մշակել դասի արդյունավետությանը նպաստող տեխնոլոգիաներ ուրվագծային քարտեզով աշխատելու միջոցով: Մենք մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- ✓ Ուսումնասիրել աշխատանքի թեմային առնչվող առկա մասնագիտական գրականությունը և վերլուծել քննարկվող սկզբունքները:
- ✓ Իրականացնել դասալսումներ և քննարկել արդյունքները:

- ✓ Մշակել և իրականացնել դասեր՝ հիմնավորելու համար այդ դասերի ընթացքում քարտեզով աշխատելու կազմակերպման արդյունավետությունը:
- ✓ Վերլուծել մեր ուսումնասիրությունների արդյունքները, մշակել մեթոդական ցուցումներ:
- ✓ Կատարել ձեռքբերած փաստերի վիճակագրական վերլուծություն:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Շատ հետազոտողներ մտածում են, որ այսօր հրամայական է դարձել աշակերտների մոտ ատեղծել դասի արդյունավետությունը խթանող գործիքներ: Ըստ Ջոնսոնների ուսումնական գործընթացի բաղադրիչները հիմնականում ներկայացնում են աշակերտակենտրոն սկզբունքներ, որոնք նպաստում են մասնակցության ճանապարհով գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը:

Քարտեզներով և ուրվագծային քարտեզներով աշխատելը (իլյուստրացիան, դեմոնստրացիան) ինքնուրույնություն է հաղորդում աշակերտին: Առանց քարտեզագրական և տեղագրական գիտելիքների բազմաթիվ աշխարհագրական հասկացություններ, օբյեկտներ և երևույթներ աշակերտների համար կմնան անհասկանալի ու անբացատրելի: Միայն քարտեզի միջոցով կարելի է գիտելիքները դարձնել տեսանելի, պատկերավոր, դյուրըմբռնելի, իսկ ուրվագծային քարտեզները աշխարհագրության ուսուցման կարևորագույն միջոցներից են, որոնք օժանդակում են աշակերտների պատկերային մտածողությանը կամ պատկերացումների զարգացմանը, հիշողության ամրապնդմանը:

Ուրվագծային քարտեզների վրա համապատասխան աշխատանք կատարելու միջոցով հոկվում են աշակերտների աշխարհագրական գիտելիքները, դրանք դառնում են ավելի իրական, խորը և ամբողջական:[1]

Գեղեցիկ և լավ լրացված ուրվագծային քարտեզը գեղագիտական հաճույք կարող է պարգևել և՛ աշակերտին, և՛ ուսուցչին:

Մեր խնդիրն է.

1. աշակերտներին սովորեցնել հասկանալ քարտեզը,
2. գրագետ կարդալ քարտեզը,
3. իմանալ քարտեզը և կիրառելի դարձնել:

Այսպիսով, յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, ինչը ենթադրում է նաև, մեթոդից կախված, մեթոդի ձևափոխման հնարավորություն: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի

[1] Խաչիկ Սարգսյան, Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, Երևան 2002, էջ 152:

վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է:

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է: Հարկ է նշել, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռբերմանը:

Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:

Աշխարհագրության դասապրոցեսին նպատակահարմար է կիրառել հաճախակի օգտագործվող «Մտագրոհ», «Երեք բանալի և մեկ կողպեք», «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդների կիրառման հնարավորություն՝ որպես տեքստի ընկալման, վերլուծության, գլխավորը երկրորդականից տարբերելու, սեփական կարծիքը հիմնավորելու, ընդհանրացման, համագործակցային հմտությունների զարգացման արդյունավետ ձև: Մեթոդները նպատակահարմար են կիրառել այն թեմաների դասավանդման ժամանակ, որոնք բավականին ծավալուն են:[2]

Ստեղծագործական մեթոդները նպատակաուղղված են անձի ստեղծագործական գործունեության փորձի, ստեղծագործական կարողությունների և մտածողության զարգացմանը: Դրանք խթանում են նաև դպրոցականների ինքնուրույնությունը, բարձրացնում նրանց իմացական ակտիվությունը, զարգացնում ստեղծագործական և քննադատական մտածողությունը՝ հնարավորություն տալով ձևավորել սեփական կարծիք և դիրքորոշում, ներկայացնել այն տարբեր

[2] Պետոյան Կ. Խ., Համագործակցային մեթոդների կիրառման հմտությունների ձևավորումը աշխարհագրության դասերին, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, N 1, էջ 59-60: http://shsu.am/media/journal/2019n1b/5.pdf

լսարաններում, զարգացնել կանխատեսելու, պլանավորելու և ստեղծագործական, հետազոտական կարողությունները:

Պրոբլեմային շարադրանքի մեթոդը միտված է դպրոցականներին իմացության բարդ ուղու ծանոթացմանը, որտեղ կիրառվում են որևէ բարդ հիմնահարցի ապացուցում պահանջող առաջադրանքներ: Այն նպաստում է հետազոտական հետևյալ կարողությունների զարգացմանը՝ կապեր ստեղծել տեղեկույթի տարբեր աղբյուրների միջև, մշակել տվյալներ և հաղորդել, զեկուցել արդյունքներ, մեդիայում ներկայացված տեղեկույթի վերլուծության և մեկնաբանման համար օգտագործել քննադատական գրագիտության կարողություններ:

Մասնակի-որոնողական մեթոդի նպատակն է դպրոցականին աստիճանաբար մոտեցնել ստեղծագործական աշխատանքին: Այս մեթոդը ենթադրում է ինքնուրույն գտնել նորն ու տրված տիպային պլանով աշխատանքից բացի կատարել լրացուցիչ որոշակի առաջադրանքներ՝ հենվելով ձեռք բերած գիտելիքների վրա: Այն նպաստում է հետազոտական հետևյալ կարողությունների զարգացմանը՝ հավաքել, գրանցել, ստուգել տվյալները, ճանաչել տեղեկատվության առաջնային և երկրորդական աղբյուրները, լուծումներ գտնելու և տեղեկացված որոշումների կայացնելու համար հավաքել և վերլուծել տվյալներ, ուսումնասիրել տարբեր աղբյուրներ, համեմատել, հակադրել և կապեր ստեղծել մեդիայի տարբեր աղբյուրների միջև և այլն:

Աշխարհագրության ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով կիրառվող վերոնշյալ մեթոդներին բնորոշ է պրոբլեմային իրավիճակների ստեղծումը, պրոբլեմային առաջադրանքներն ու հարցերը և ուսումնական պրոբլեմների լուծումը: Այս առաջադրանքների կատարումը հենվում է դպրոցականների՝ նախկինում ձեռք բերած գիտելիքների ամրապնդման և նորի յուրացման վրա: Սա ենթադրում է նաև նոր և անծանոթ իրավիճակներում ինքնուրույն կամ ուսուցչի ուղղորդման միջոցով տրված խնդրի լուծման եղանակների որոնում կամ ունեցած գիտելիքները կիրառում:[3]

[3] ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2018, էջ 41-42: http://ysu.am/files/collection_of_scientific_articles_of_ysu_sss_1.1(24)_pages_40-45.pdf

Դիտումը, ինչպես և այլ մեթոդ, ունի իր առավելություններն ու թերությունները: Առավելությունն այն է, որ փաստերը վերցվում են իրականությունից, և առկա է դիտման առարկայի՝ ամբողջականության, համակողմանի կապերի ու դրսևորումների մեջ ուսումնասիրման հնարավորություն: Սակայն դիտումը հնարավորություն չի տալիս ակտիվորեն ներգրավվելու ուսումնասիրվող գործընթացում, փոխելու այն կամ կանխամտածված ստեղծելու որոշակի իրավիճակ: Հետևաբար դիտման արդյունքները պետք է ամրագրվեն այն տվյալներով, որոնք ստացվում են մանկավարժական հետազոտության այլ մեթոդների միջոցով:[4]

Մեր ուսումնասիրությունների, վարած դասերի ընթացքում համոզվել ենք, ժամանակակից դպրոցում իրականացվող աշխարհագրության դասերի ընթացքում կիրառվող բազմաթիվ մեթոդների մեջ արդյունավետության ապահովման հարցում իր անփոխարինելի տեղն ունի ԽԻԿ համակարգը:

ԽԻԿ-ը՝ որպես համակարգ, ուսուցրին օգնում է որոշակիացնել դասի յուրաքանչյուր փուլի խնդիրները և ընտրել դասի տարբեր փուլերում կիրառվող նպատակահարմար մեթոդները: Իմաստավորման փուլի առանցքային նպատակներն են՝

- ✓ Սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը ու ձևավորումը,
- ✓ Տեղեկատվության արդյունավետ ընկալումը,
- ✓ Հին գիտելիքների և նոր տեղեկությունների շաղկապում, համադրում, հակադրում, համեմատական հմտության ձևավորումն ու դրա հիման վրա կատարվող անցումը իմացական նոր մակարդակի:
- ✓ Օգնել սովորողներին վերահսկելու սեփական ընկալումը և իրենց նախնական իմացածի և նոր գիտելիքների միջև կամուրջ կառուցել:

[4] Ասատրյան Լ. Թ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն: Ուս. Ձեռնարկ/ Լ. Թ. Ասատրյան, Գ. Հ. Հակոբյան.- Եր.: Արտագերս, 2011, էջ 45-47:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Նորագույն տեխնոլոգիաների բազմազանության ժամանակաշրջանում, սովորողի ուսումնառության գործընթացում հետաքրքրասիրությունը խթանելու, դասապրոցեսին ներգրավվելու, ուսման արդյունավետությունը ապահովելու համար, դպրոցի, ուսուցիչների առջև կան մի շարք խնդիրներ, որոնց լուծմանը կարող են նպաստել դասին մեթոդների, ուսուցման միջոցների նպատակային կիրառումը:

Աշխատանքը սկսելուց առաջ իմ առջև ունեցել եմ հինգ խնդիր.

1. Արդյունավետության խթանումը քարտեզներով,
2. Խթանել աշակերտների մոտիվացիան,
3. Բարձրացնել առաջադիմությունը,
4. Բոլորին կենտրոնացնել դասին, զարկ տալ նրանց վերլուծական մտածողությանը,
5. Դասի նկատմամբ հետաքրքրասիրություն առաջացնել:

Վերոնշյալից զատ, անհրաժեշտ եմ համարել դուրս բերել խնդրի առաջնահերթությունները, դրա տարբեր կողմերը, ուսումնասիրել այդ խնդրի վերաբերյալ գրականության մեջ առկա փոփոխությունները: Գիտական գրականության ուսումնասիրությունը ինձ թույլ է տալիս պարզաբանելու, թե իմ կողմից փորձարկվող խնդիրը որքանով է ուսումնասիրված փորձագետների կողմից, խնդրի վերաբերյալ ինչպիսի գիտական քննարկումներ են առկա, ո՞ր մոտեցումներն են հնացած, ո՞ր հարցերը դեռ լուծում չեն գտել և այլն:

ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Սույն հետազոտությունը կատարել եմ Փամբակի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում, որտեղ սովորում են թվով 10 աշակերտներ:Որոնցից 6-ը տղաներ են,իսկ 4-ը՝ աղջիկներ:

Ունենք տարբեր մակարդակի գիտելիքներ ունեցող աշակերտներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Այս ամենից հետո դիմում եմ ներկայացնում դպրոցի տնօրենին հետազոտություն կատարելու համար, որում ներկայացնում եմ հետազոտության նպատակը, համառոտ նկարագրությունը:

Աշխատանքն իրականացնելիս ընտրել եմ հիմնական ուսումնասիրվող փոփոխականները.

1. Կախյալ փոփոխական- զարգացնել աշակետների կարողունակությունները և հմտությունները դասապրոցեսի արդյունավետությունը բարձրացնելու համար:
2. Անկախ փոփոխական- Ուրվագծային քարտեզը, որպես գործիք:

Իմ առաջ դրել եմ հետազոտության խնդիրը, նպատակը և առաջադրել եմ հիպոթեզ, ըստ որի՝ «Հետազոտության խնդիրն է սովորողների հետաքրքրասիրությունը բարձրացնել ուրվագծային քարտեզների միջոցով՝ խթանելու դասապրոցեսի արդյունավետությունը»: Այնուհետև առանձնացրել եմ այն հարցերը, որոնց պատասխաններն ակնկալում եմ ստանալ հետազոտության վերջնարդյունքում: Դրանք են.

1. Դասը որքանո՞վ հետաքրքրեց աշակերտներին,
2. Քարտեզներ կիրառելիս որքանո՞վ մեծացավ վերջիններիս գիտելիքները,
3. Արդյո՞ք դասի արդյունավետության բարձրացումը կնպաստի սովորողների ճանաչողական զարգացմանը:
4. Արդյո՞ք վերջիններս կկարողանան գտնել պատճառահետևանքային

կապեր:

Այս ընթացքում ես հանդես եմ եկել որպես հետազոտող, որպեսզի համապարփակ կարողանամ հետևել ընթացքին և մասնակի դիտարկեմ սովորողների հետաքրքրությունները: Դիտարկումը կատարել եմ կրկնակի՝ 2 դասաժամերի ընթացքում:

Հետազոտության տարբեր փուլերում կիրառել եմ դիտարկման և թեստավորման մեթոդները:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1

Դասի ընթացքում օգտագործել եմ քարտեզներ և ուրվագծային քարտեզներ: Առաջնային նպատակս էր աշխուժացնել, հետաքրքրություն մտցնել և նրանց ավելի ինքնավստահ դարձնել, քանի որ շատ ենք հանդիպում, երբ աշակերտներն ասում են, որ չեն կարող առանց փորձելու: Ես միշտ փորձում եմ նրանց մեջ արթնացնել Բ. Քարսոնի մտքերը.

«Կյանքում հաջողության չհասնողները նրանք են, ովքեր ամեն ինչի համար արդարացում ունեն: Երբեք էլ ուշ չէ հասկանալ, որ ամեն մարդ կարող է իր ճակատագրի տերը դառնալ, եթե իսկապես ուզենա»:

Սկսելով դասապրոցեսը ես կատարեցի հաշվառում և անցա դասին:Ուղղեցի հարցեր՝ ինչ է աշխարհագրական դիրքը, որն է համարվում բարենպաստ կամ անբարենպաստ,երկրների ֆիզիկաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքեր:Սովորողների պատասխանների ամփոփման հիման վրա սահուն անցա նոր նյութին: Մի փոքրիկ դասախոսությունից հետո դասարանը բաժանվեց խմբերի՝ (շրջագայություն պատկերասրահում) մեթոդով:

1-ին խումբ-Աշխարհագրական դիրքը

2-րդ խումբ-Ափագիծը

3-րդ խումբ-Մակերևույթը

Յուրաքանչյուր խմբից մեկը մոտենալով իրենց պաստառին բացատրում է և այդպես,որ մյուսները միմյանց լսելուց հետո հարցեր են ուղղում,պարզաբանում ուսուցչի օգնությամբ: Հանձնարարեցի տնային աշխատանք՝ տեղանունները գրել աշխարհագրության տետրում և անցկացնել ուրվագծային քարտեզի վրա:

Անհրաժեշտ է նշել, որ աշխարհագրության դասավանդման մեթոդիկան կապված է նաև փիլիսոփայության հետ, որովհետև առարկայի ուսուցումը սերտորեն առնչվում է մտածողության զարգացման հետ: Աշխարհագրության ուսումնասիրման ընթացքում աշակերտների մոտ ձևավորվում է ընդհանրացման ու կոնկրետացման, համակարգման, հիմնավորման, համադրման, ինդուկցիայի ու դեդուկցիայի, մտավոր գործողությունների կատարման կարողություններ, որոնք անհնարին է իրականացնել առանց տրամաբանությանը դիմելու: Աշխարհաճանաչողությունը սկսվում է նրա

նյութական հիմքի ճանաչումից: Քանի որ աշխարհագրության ուսումնասիրման նյութական հիմքը բնությունն է, այսինքն՝ այն ամենը, ինչ ընդհանրապես գոյություն ունի իր բազմազան դրսևորումներով՝ տիեզերք, տարածություն, ժամանակ, մայրամուտ, արևածագ, քամի, օվկիանոս, լեռ, բույս, կենդանի, մարդկային հույզեր և այլն: Այսինքն՝ բնության և մատերիայի և նրա ձևերի, դրսևորումների ուսումնասիրությունը փիլիսոփայության ոլորտն է, այստեղից էլ հետևում է աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի և փիլիսոփայության կապը:[5]

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Երկրորդ դասի պլանի համաձայն, դասը սկսել եմ մտագրոհով, ապա բացատրել նոր դասը՝ «Աֆրիկայի կլիման և ներքին ջրերը»: Այնուհետև «երեք բանալի, մեկ կողպեք» մեթոդով աշակերտները կարողացան կռահել և ուրվագծային քարտեզի վրա գտնել կլիմայական գոտիները, գրել նաև նշանավոր գետերն ու լճերը: Երեք աշակերտներ դժվարանում էին և նրանց օգնության եկան
ընկերները՝ ուղղորդելով: Մեկ աշակերտի նաև իմ ուղղորդմամբ աշխուժացրի և կարողացավ գրառել այդ անունները:

Ընդհանուր առմամբ դասին ոչ բոլոր աշակերտներն էին ակտիվ, ոչ բոլորը կարողացան ցուցաբերել վերլուծական մտածողություն: Այնուամենայնիվ ստացված ինֆորմացիան ամրագրելուց հետո աշակերտների աչքերում փայլ, բավարարվածություն, ինքնագոհունակություն՝ կարծես հաղթահարել էին մի հսկա արգելք: Իմ լիարժեք համոզմամբ այս մեթոդով աշակերտը դառնում է ուսուցման ակտիվ մասնակից: Նա ոչ միայն վերցնում է ինֆորմացիան, այլև ինքն է որոնում, գտնում իր հարցերի պատասխանները:

Ամփոփելով կիրառված մեթոդների արդյունքները, այսկերպ բարձրանում է սովորողների հետաքրքրասիրությունը առարկայի նկատմամբ, որն էլ նպաստում է առաջադիմության բարձրացմանը, տրամաբանության և վերլուծական մտածողության զարգացմանը:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալների ձևակերպումը և վերլուծությունը ներկայացրել եմ հետևյալ մեթոդներով՝ գրանցում, համեմատում նորմայի հետ, այնուհետև ամփոփել փորձարկման արդյունքները: (Աղյուսակը տե՛ս ստորև)

Դիտարկող՝ Ա.Մելիքյան 1-ին և 2-րդ դասի արդյունքներ

Հետաքրքրվածներ	6	8
Քարտեզից օգտվողներ	4	6
Ակտիվություն ցուցաբերողներ	7	9
Վերլուծական մտածողություն	3	6

Հայտորոշիչ թեստի արդյունքներ

Աշակերտներ	1-ին դաս	2-րդ դաս
N1	4	5
N2	7	8
N3	8	9
N4	3	4
N5	8	9
N6	6	7
N7	5	6
N8	8	9
N9	9	9
N10	6	7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտության արդյունքից համոզվեցի, որ դիդակտիկ նյութերը, քարտեզներն ու ուրվագծային քարտեզները բարձրացնում են առաջադիմությունը և որակը, զարգացնում են պատկերային հիշողությունը, դարձնում ավելի տեսանելի ու իրական, իսկ դրանցով աշխատանքը ամբողջացնում է գիտելիքները, ամրակայում ձեռք բերվածը և անջնջելի հետք թողնում գիտակցական մակարդակի վրա:

Այսպիսով, փորձը ցույց տվեց, որ կիրառված մեթոդները և գործիքները նպաստում են սովորողների կողմից ուսումնասիրվող առարկայի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը, նյութի խորը ուսումնասիրմանը, նրանց ինքնուրույն աշխատանքի արդյունավետությանը և վերլուծական մտածողության զարգացմանը:

Ամենակարևորը, պետք է հիշել՝ եթե կա վճռականություն, ելք կգտնվի և գործը կհաջողվի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասատրյան Լ. Թ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն: Ուս. Ձեռնարկ/ Լ. Թ. Ասատրյան, Գ. Հ. Հակոբյան.- Եր.: Անտարես, 2011, 179 էջ:
2. ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2018: http://ysu.am/files/collection_of_scientific_articles_of_ysu_sss_1.1(24)_pages_40-45.pdf
3. Պետոյան Կ. Խ., Համագործակցային մեթոդների կիրառման հմտությունների ձևավորումը աշխարհագրության դասերին, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, N 1, էջ 59-60: http://shsu.am/media/journal/2019n1b/5.pdf
4. Սարգսյան, Խաչիկ Բաբկենի, Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, Երևան, «Զանգակ-97», 2002, 328 էջ:
5. Рапацевич Евгений Степанович, Современное слово, 2005 г., с. 720.

Դասապլան 1
Ուսուցիչ՝ Անդրանիկ Մելիքյան
Առարկա՝Աշխարհագրություն
Դասարան՝6-րդ
Ամսաթիվ՝ 04.04.2022թ.

Թեմա՝	Աֆրիկա: Աշխարհագրական դիրքը,ափագիծը.ռելիֆը
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք,աշխարհի և Աֆրիկայի քարտեզներ,ատլաս
Հիմնական հասկացություններ	Աշխարհագրական դիրք,Ջիբրալթարի ն-ց,Միջերկրական ծով, Սուեզի ջրանցք, Կարմիր ծով, Բաբ-Էլ Մանդեբի նեղուց,Ադենի ծոց,կորալներ,Գվինեական,Ադենի ծոցեր,Սոմալի թ-կզի,Մադագասկար կղզի, Սահարա,Կալահարի,Նամիբ անապատներ,Սուդանի ս-թ,Ասսալի իջվածք,Կիլիմանջարո,Ատլասի, Կապի,Դրակոնյան լեռներ,Եթովպիական լ-աշխարհ,Կամերուն հրբ.
Դասի նպատակը՝	Իմանա ինչպիսին է Աֆրիկայի ԱԴ-ն,ափագիծը:Ինչու է համարվում սարահարթերի մայրցամաք,իմանա հին ու երիտասարդ լեռները,անապատները:

Գործողություններ (ժամ/ տևողություն)	Պլանավորած ՈւԳ ռազմավարություններ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում էդասի նպատակին)
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա • Նկարագրել ու բնութագրել Աֆրիկան • Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ ափերը ողողող ջրերը,կղզիները,թերակղզիները,լեռները,անապատները • Համեմատել և զուգահեռներ տանել մյուս մայրցամաքների հետ • Վերլուծել Աֆրիկայի հնարավորությունները նրա զարգացման գործում և այլն	

Մտագրոհ՝ 5 րոպե Նոր դասի հաղորդում՝ 30 րոպե	Ինչ է աշխարհագրական դիրքը, ինչպիսին է բարենպաստ,թե ոչ,որ օվկիանոսներն են ողողում ափերը: Սովորողների պատասխանների ամփոփման հիման վրա սահուն անցում նոր նյութին: Մի փոքրիկ դասախոսությունից հետո դասարանը բաժանվեց խմբերի՝ (շրջագայություն պատկերասրահում) մեթոդով: ՝ 1-ին խումբ-Աշխարհագրական դիրքը 2-րդ խումբ-Ափագիծը 3-րդ խումբ-Մակերևույթը Յուրաքանչյուր խմբից մեկը մոտենալով իրենց պաստառին բացատրում է նայդպես մյուսները:Միմյանց լսելուց հետո հարցեր են ուղղում,պարզաբանում ուսուցչի օգնությամբ:	Ամրապնդել նոր դասը 1. Ինչպիսին է Աֆրիկայի Ադ-ն: 2. Քարտեզի վրա ցույց տալ Աֆրիկայի աշխարհագրական օբյեկտները: 3. Որո՞նք են Աֆրիկայի առանձնահատկությունները;
Գնահատում՝ 5րոպե	Գնահատումը կատարվել է հայտորոշիչ թեստով:	
Տնային հանձնարարություն՝3-5րոպե	Տեղանունները գրել աշխարհագրության տետրում և անցկացնել ուրվագծային քարտեզի վրա;	

Հայտորոշիչ թեստ. 6-րդ դասարան

Աֆրիկա, աշխարհագրական դիրքը, ափագիծը, ռելիեֆը (10 րոպե)

1. Ո՞ր ծովն է Աֆրիկայի հյուսիսում: (1 միավոր)

   ա) Կարմիր

   բ) Սև

   գ) Միջերկրական

2. Աֆրիկայի հարավային ծայրակետն է. (1 միավոր)

   ա) Ալմադի
   բ) Ասեղի

   գ) Ռաս-Հաֆուն

3. Համաշխարհային օվկիանոսի ամենատաք և ամենաաղի ծովը (1,5 միավոր)

   _____

4. Աֆրիկայի միակ խոշոր կղզին է՝_____(1,5 միավոր)

5. Գտնել սխալը. (2 միավոր)

   ա) Աֆրիկայի ամենացածր կետը Ասսալի իջվածքն է:

   բ) Աֆրիկայի ամենաբարձր գագաթը Կիլիմանջարոն է:

   գ) Աֆրիկայի երիտասարդ լեռներից են Կապի և Դրակոնյան լեռները:

6. Բացատրել **,**թե ինչու՞ է Աֆրիկան համարվում ամենատաք մայրցամաքը**: (3** միավոր**)**

Հայտորոշիչ թեստ. 6-րդ դասարան

Աֆրիկայի կլիման, ներքին ջրերը. (10 րոպե)

1. Աֆրիկայի կլիմայի ձևավորման գործում կարևոր են մթնոլորտի շրջանառությունը,_____, ծովային հոսանքները: (1,5 միավոր)

2. Աշխարհի ամենաչոր և ամենատաք անապատ Սահարայում դիտվել է բացարձակ առավելագույն ջերմաստիճանը (ստվերում)՝ (1 միավոր)

   ա) +58,1º

   բ) +78º

   գ) +88,1º

3. Աֆրիկայում առավելագույն տեղումներ թափվում են. (1 միավոր)

   ա) Կամերուն լեռան լան ջերին

   բ) Սուդանի սարահարթում

   գ) Նեղոսի հովտում

4. Աֆրիկայի ամենախոր լիճն է՝_____(1,5 միավոր)

5. Ինչու՞ է Աֆրիկայի ջրագրական ցանցը բաշխված անհավասարաչափ: (2 միավոր)

6. Ի՞նչ տնտեսական նշանակություն ունեն Աֆրիկայի գետերը և լճերը: (3 միավոր)

Դասապլան 2
Ուսուցիչ՝ Անդրանիկ Մելիքյան
Առարկա՝ Աշխարհագրություն
Դասարան՝6-րդԱմսաթիվ՝ 11.04.2022թ.

Թեմա՝	Աֆրիկա: Աշխարհագրական դիրքը,ափագիծը.ռելիֆը
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք,աշխարհի և Աֆրիկայի քարտեզներ,ատլաս
Հիմնական հասկացություններ	Կլիմայաստեղծ գործոններ, պասսատներ, կլիմայական գոտիներ և մարզեր, վաղիներ, Նեղոս, Կոնգո, Զամբեզի, Նիգեր, Լիմպոպո, Օրանի գետեր, Վիկտորիա ջրվեժ, Նյասա, Տանգանիկա, Վիկտորիա, Թանա լճեր
Դասի նպատակը՝	Իմանա՝ ինչ է կլիման, կլիմայաստեղծ գործոնները, գաղափար կազմի Աֆրիկայի կլիմայական գոտիների մասին և ծանոթանա Աֆրիկայի խոշոր գետերին և լճերին:
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա • ԹվարկելԱֆրիկայում առավել տարածված կլիմայական գոտիները • Քարտեզի վրա ցույց տալ գետերը, լճերը • Համեմատել և վերլուծել երկրի վրա տարածված կլիմայական գոտիների հետ և անել վերծուծություն • Համեմատել Աֆրիկայի գետերը և լճերը իր իմացած գետերի և լճերի հետ, անել եզրահանգումներ

Գործող ու թյունները (ժամ/ տևողություն)	Պլանավորած ՈւԳ ռազմավարություններ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
Մտագրոհ՝ 5 րոպե Նոր դասի հաղորդում՝ 25րոպե	Ի՞նչ է կլիման. կլիմայաստեղծ գործոններ: Ի՞նչ կլիմայական գոտիներ գիտեն: Ապա սահուն անցում կատարվեց Աֆրիկայի կլիմայական գոտիների ներկայացմանը: Ամփոփիչ հարցերից հետո ուսուցիչը փոքրիկ դասախոսությամբ ներկայացրեց Աֆրիկայի կլիմայական գոտիների բնութագրերը, բացատրեց Աֆրիկայի ներքին ջրերը՝ ցույց տալով քարտեզի վրա գետերը, լճերը, ջրվեժները: Կրկնեցին, հարց ու պատասխանով ամրապնդեցին նոր սովորած տերմինները, համեմատեցին նախորդ տարիներին իրենց իմացած գետերի, լճերի հետ: «3 բանալի, 1 կողպեք» մեթոդով 3 հուշող նախադասություններ հնչեցրեց ուսուցիչը, որպեսզի հասկանան ինչի մասին է խոսքը և գտնեն համապատասխան գետը, լիճը քարտեզի վրա և ուրվագծային քարտեզի վրա գրի առան:	Ամրապնդում՝ 1. Աֆրիկայում ինչու՞ են տարածված մերձհասարակածային և արևադարձային գոտիները 2. Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Աֆրիկայի կլիմայական գոտիները, գետերը և լճերը 3. Որենք են • ամենաերկար գետը • ամենախոր լիճը • Ամենաբարձր ջրվեժը Աֆրիկայում
Գնահատում՝ 7րոպե	Գնահատումը կատարվել է 6 հարցից բաղկացած հայտորոշիչ թեստով2՝2ստուգելու արդյունավետությունը:	

Տնային հանձնարարություն՝1 դրպե	Տետրում գրի առնել գետերի, լճերի, ջրվեժների անունները՝ Մ-աձև աղյուսակում:	